

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի
Փոքր դրամաշնորհների հայտի ձև**

<i>Ծրագրի անվանումը</i>	Շիրակի և Արագածոտնի մարզերի հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանությունը, որպես հակակոռուպցիոն դիմադրողականություն առողջապահական գործընթացներում:
<i>Դիմող կազմակերպության անվանումը</i>	Շիրակի մարզի «Բարեփոխում և Զարգացում» Իրավապաշտպան Հասարակական Կազմակերպություն
<i>Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ</i>	Արմեն Խաչատուրի Գաբրիելյան ՀՀ, Գյումրի, Խրիմյան Հայրիկ փող. 62ջ., բն. 14,2 Հեռ/ֆաքս /+374 60/ 466 393, բջջ. /+374 55/ 553 555, Էլեկտրոնային հասցե՝ armen198006@rambler.ru
<i>Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)</i>	ՀՀ, Շիրակի և Արագածոտնի մարզեր
<i>Ծրագրի տևողությունը</i>	4 ամիս /01. Ապրիլի – 31. հուլիսի 2016թ./
<i>Ծրագրի հակիրճ նկարագրիրը</i>	Շիրակի և Արագածոտնի մարզերում առողջապահական գործընթացներում նվազեցնել հնարավոր կոռուպցիոն ռիսկերը՝ հաշմանդամ կանանց իրավունքների ու արտոնությունների պաշտպանման միջոցով:
<i>ՀԵԻԱ-ից պահանջվող գումարի չափը</i>	1489200 ՀՀ դրամ
<i>Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)</i>	Գյումրու «Կանթեդ» Մանկապատանեկան Հասարակական Կազմակերպություն

Դիմող կազմակերպության/նների նկարագրություն (առավելագույնը կես էջ)

1. Շիրակի մարզի «Բարեփոխում և զարգացում» Իրավապաշտպան Հասարակական Կազմակերպությունը հիմնադրվել է 2007թ., որի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական կարգերի ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը՝ ի շահ մեր երկրի բարգավաճմանն ու բարեկեցիկ կյանքի: ՀԿ մինչև օրս իրականացրել և իրականացնում է բազմաթիվ միջոցառումներ՝ մարդու իրավունքների, միջազգային պայմանագրերի, միջազգային մարդասիրական իրավունքի ուսուցողական, կրթական դասընթացներ, սեմինարներ և գործնական պարապմունքներ: ՀԿ-ն ունի մարդու իրավունքների գրադարան, որի միջոցով բարձացվում է հասարակության տարբեր խավերի իրազեկության, գրագիտության և տեղեկատվության մակարդակը՝ մարդու և քաղաքացու բնական, սահմանադրական իրավունքների բնագավառում:
2. Գյումրու «Կանթեդ» Մանկապատանեկան Հասարակական Կազմակերպությունը հիմնադրվել է 1997թ., որի առաքելությունն է նպաստել երկրում ժողովրդավարության կայացմանը և քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության միջոցով: ՀԿ մինչև օրս իրականացրել և իրականացնում է բազմաթիվ դրամաշնորհային և ոչ դրամաշնորհային ծրագրեր՝ միտված առաքելության կատարմանը, այդ թվում անչափահասների աշխատանքային իրավունքների շահերի պաշտպանության, դեպի ժողովրդավարական

հիմունքներով ընտրություններ, մարդու իրավունքի պաշտպանության կրթական ծրագիր, խորհրդատվական և բարեգործական, ինչպես նաև հումանիտար ծրագրեր:

Ծրագրի նկարագրություն (*առավելագույնը երկու էջ*)

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան 2006թ. դեկտեմբերի 13-ին ընդունել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան: Կոնվենցիան երաշխավորում է, որ մարդու իրավունքները հարգվեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց պարագայում. «աջակցել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մարդկային իրավունքների ու հիմնարար ազատությունների լիակատար ու հավասար իրացումը, ինչպես նաև հարգալից վերաբերմունքը նրանց արժանապատվության նկատմամբ»: Սույն կոնվենցիան Հայաստանը ստորագրել է 2007թ. մարտի 30-ին, որն ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 22-ին: Հաստատվելուց հետո ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն դարձել է ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս:

Հաշմանդամն այն անձն է, որն առողջության խաթարման պատճառով կենսագործունեության սահմանափակման հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն: Հաշմանդամներն ունեն ՀՀ Սահմանադրության և օրենքներով սահմանված կարգով նույն իրավունքները, ազատությունները ու պարտականությունները, ինչպես այլ անձինք:

Ներկայումս Հայաստանում գրանցված են 197000 հաշմանդամներ, որոնցից 47 տոկոսը կանայք են: Հաշմանդամ կանայք հասարակության ամենախոցելի խումբն է: Թե որպես կին, և թե որպես հաշմանդամություն ունեցող անձ նրանք ենթարկվում են կրկնակի խտրականության: Մշտապես բախվում են սոցիալական խոչընդոտների, նրանց վերարտադրողական առողջության ընտանիք ունենալու իրավունքները մեծ մասամբ չեն իրագործվում: Գաղտնիք չէ, որ առողջապահության համակարգում դեռևս գոյություն ունեն տասնամյակների ընթացքում արմատավորված կոռուպցիոն ռիսկեր և խորացված անցանկալի երևույթներ: Առանց այն էլ ծանր սոցիալական պայմաններում գտնվող անօգնական, ինքնիրեն հասարակության անլիարժեք անդամ համարող հաշմանդամ կինը առողջապահական գործընթացներում մշտապես բախվում է ֆիզիկական և սոցիալական խոչընդոտների, կաշառակերության, դրամաշորթության, հովանավորչության բժշկական անտարբերության պատճառով:

«Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշմանդամ կանանց երաշխավորվում է պետական բյուջեի հաշվին որակյալ անվճար բժշկական օգնություն բուժ հիմնարկներում: 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները ապահովվում են անվճար դեղորայքով, իսկ 3-րդ խմբին՝ 50 տոկոս զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններում դեղորայք ստանալու իրավունքից:

Անվճար դեղորայք ստանալը հաշմանդամ կանանց համար մեծ մասամբ դարձել է դժվար հաղթահարելի գործընթաց. մի քանի անգամ դիմելուց հետո պարզվում է, որ համապատասխան դեղորայքը արդեն սպառվել է: Շիրակի մարզում համատարած երևույթ է, երբ նման դեպքերում բուժող բժիշկը «մտերմաբար» խորհուրդ է տալիս դեղորայքը գնել իր կողմից ուղղորդված դեղատնից, հետագայում պարզվում է, որ դա նրանց մասնավոր դեղատունն է կամ իր ցանոթ մտերիմ ազգականինը:

Բուժ. հաստատություններում ավելորդ քաշքշուկներից, բուժ աշխատողների ոչ պատշաճ վերաբերմունքից խուսափելու համար հաշմանդամ կինը գերադասում է ոչ թե օգտվել անվճար բժշկական ծառայությունից, այլ չտեսնելով իր սեփական խնդիրների լուծման այլընտրանքային ճանապարհը, դիմում է կոռուպցիոն ռիսկի՝ ստիպված կատարում է վճարում իրեն հասանելի դեղորայքի և ծառայության դիմաց, գտնվելով առանց այն էլ սոցիալական ծանր վիճակում: Կոռուպցիան առողջապահության բնագավառում շատ ավելի

վտանգավոր է, քանի որ այստեղ խոսքը մարդու առողջության և կյանքին է վերաբերվում: Շիրակի և Արագածոտնի մարզերում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հաշմանդամ կանանց առողջարանային վերականգնողական բուժումը նույնպես դժվարությամբ է ապահովվում պետ պատվեր իրականացնող բժշկական հաստատություններում /Ջերմուկ, Արգնի, Գանձադրյուր և Վանաձոր/: Քանի որ առողջարանային բուժումը կատարվում է հերթափոխային եղանակով, տարիներ շարունակ հերթագրված հաշմանդամ կանայք երկար սպասելուց հետո նույնիսկ, չեն օգտվում նշված արտոնությունից: Կոռուպցիոն ռիսկեր են պարունակում նաև հաշմանդամ կանանց համար պրոտեզա-օրթոպետիկ և վերականգնողական պարագաների, գործիքային հետազոտությունների մատչելիությունը, քանի որ այսօրինակ անվճար բժշկական ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ են ֆինանսական ծախսեր:

Ծրագրի նպատակն է նվազեցնել Շիրակի և Արագածոտնի մարզերում առողջապահական գործընթացներում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը՝ հաշմանդամ կանանց իրավունքների ու արտոնությունների պաշտպանման միջոցով:

Խնդիրները՝

1. Բացահայտել առողջապահական գործընթացներում հնարավոր կոռուպցիոն մարտահրավերները, կոռուպցիա ծնող պատճառները, դրանց հետևանքները, ինչպես նաև կանխարգել առաջացման հիմնական խոչընդոտները:
2. Բարձրացնել հաշմանդամ կանանց իրազեկվածության մակարդակը, իրենց իրավունքների վերաբերյալ՝ ուսուցման և քարոզչության միջոցով, ինչպես նաև սերմանել հարգանք իրենց արժանապատիվ ու հասարակության լիարժեք քաղաքացի զգալու համար:
3. Հաշմանդամ կանանց հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ պահելու, իրենց իրավունքներն ու շահերը բուժ հաստատություններում, առողջապահական-վերականգնողական կենտրոններում պաշտպանելու համար ստեղծել **ԹԵԺ ԳԻԾ՝ արագ արձագանքման կենտրոն:**

Ծրագրի ուղղակի շահառուներն են Շիրակի և Արագածոտնի մարզերի թվով 100 հաշմանդամություն ունեցող կանայք, իսկ անուղղակի շահառուներն են՝ հաշմանդամություն ունեցող, բժշկական գործընթացներում կոռուպցիոն ռիսկերի հետ բախվող հաշմանդամ անձինք:

Նախատեսվում են անցկացնել յուրաքանչյուր մարզում թվով 50 հաշմանդամ կանանց հետ անհատական զրույցներ հարցաթերթիկների միջոցով, սեմինար պարապմունք, այցելություններ դեղատներ, բուժ հաստատություններ և առողջարաններ՝ տեղում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը ուսումնասիրելու և բացահայտելու համար, ուսումնասիրել բժիշկ-հիվանդ /հաշմանդամ կին/ փոխհարաբերությունները: Թռուցիկների և պաստառների միջոցով իրազեկել և բարձրացնել գիտակցության մակարդակը, թեժ գծի միջոցով աջակցել հաշմանդամ կանանց անվճար բուժում ստանալու իրավունքը: Հրատարակել մոնիթորինգի արդյունքների զեկույցի տեսքով, որն էլ հետագայում դրական ազդեցություն կթողնի և կունենա հնարավոր կոռուպցիոն ռիսկեր պարոնակող դրսևորումների վրա:

Թեժ գիծը կգործի աշխատանքային բոլոր օրերին և ժամերին, որի խորհրդատվությունը և արագ արձագանքման կազմակերպումը իրականացնելու է ծրագրի աշխատակազմը՝ համապատասխան մասնագետի միջոցով: Ծրագրի իրականացման արդյունքում այն կթողնի իր դրական և իրավական ազդեցությունը, քանի որ այն ծրագրի

ավարտից հետո գործելու է, որպես «Արագ արձագանքման կենտրոն» և կրելու է մշտական բնույթ:

Ժամանակացույց

Շաբաթ	Գործողություն
1-ին	Աշխատակազմի հետ աշխատամթախին պայմանագրերի կնքում և աշխատանքային նկարագրերի հետ ծանոթացում, ինչպես նաև գրասենյակային գրենական պարագաների և նյութերի ձեռք բերում:
2-րդ	Ծրագրի ընթացքի վերաբերյալ իրազեկում՝ մամլո ասուլիս և արագ արձագանքման կենտրոնի հիմնում, թեժ գծի ստեղծում:
3-րդ	Հարցաթերթիկների մշակում և պատրաստում:
4-րդ	Հարցաթերթիկների մշակում և պատրաստում:
5-րդ	Պատահական այց թվով 2 առողջարաններում /մոնիթորինգ/:
6-րդ	Պատահական այց թվով 2 առողջարաններում /մոնիթորինգ/:
7-րդ	Հարցաթերթիկների վերլուծում և ամփոփում:
8-րդ	Շիրակի մարզում թվով 50 հաշմանդամ կանանց բացահայտում և հավաքագրում, ինչպես նաև նրանց հետ անհատական զրույցի կազմակերպում /մոնիթորինգ/:
9-րդ	Արագածոտնի մարզում թվով 50 հաշմանդամ կանանց բացահայտում և հավաքագրում, ինչպես նաև նրանց հետ անհատական զրույցի կազմակերպում /մոնիթորինգ/:
10-րդ	Հարցաթերթիկների վերլուծում և ամփոփում:
11-րդ	Շիրակի մարզում թվով 30 հաշմանդամ կանանց հետ սեմինար պարապմունք 1-օրյա տևողությամբ, 4 ժամ:
12-րդ	Արագածոտնի մարզում թվով 30 հաշմանդամ կանանց հետ սեմինար պարապմունք 1-օրյա տևողությամբ, 4 ժամ:
13-րդ	Գնահատման արդյունքների ամփոփում և վերլուծում:
14-րդ	Շիրակի մարզում թվով 3 բուժ հաստատություններում այցեր և ուսումնասիրություն /մոնիթորինգ/:
15-րդ	Արագածոտնի մարզում թվով 3 բուժ հաստատություններում այցեր և ուսումնասիրություն /մոնիթորինգ/:
16-րդ	Մոնիթորինգային ամփոփիչ զեկույցի հրատարակում:
17-րդ	Ծրագրի ավարտական աշխատանքներ և փակում:
18-րդ	Հաշվետվությունների պատրաստում և ներկայացում :

Ծրագրի ղեկավար՝

Ա. Գաբրիելյան

21. 03. 2016թ.

